



ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՕԳՈՍՏՈՍ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

(Տես էրես 193):

Դ.

Ապիրատ և որդիքն. — Ներսիսի Ծնունդ և Սնունդ. — Վանորայք Սևառ Լերին.
Ստեփանոս Կարմիր-Վանեցի Գիտնական Վր. — Բարսեղ Կարողիկոս:

Վկայասիրին քեռորդին Ապիրատ, իր տոհմա-
կից իշխանաց նման տեղէ տեղ փոխադրելով իշ-
խանութեամբ, Մարաշու կողմերէ Մով կոչուած
ամուր բերդի մը մէջ հաստատեալ էր իր բնակու-
թիւնը. Թուրքաց զօրութեան և Յունաց տկա-
րանալու առեւնէն էր. ամեն մանր իշխան՝ իրեն ա-
մուր տեղ մը կը փնտռէր. Ապիրատ աւելի ամ-
րացուց այս տեղս, պէտք եղած շէնքեր և վայելուչ
եկեղեցի մ'աւելցնելով, որ յետոյ իր որդւոց հայ-
րապետական աթոռ պիտի ըլլար: Հօն 'ի լոյս ըն-
ծայեցան Գրիգորիս (1096) և Ներսէս. ետքիւն՝
յամի 1102, 'ի սկիզբն Թ գարամբտի Լուսաւո-
րութեան ազգիս. այսինքն ամբողջ յետ 800 տա-
րի անցնելու այն տարիէն՝ (302) յորում առաջին
Պահլավունի հայրապետն եղաւ Լուսաւորիչ Հա-
յոց, և իբրեւ ութ դար վերջը նոյն տարեթուին
պարգեւեցաւ Շնորհալին Հայոց: Լուսաւորիչ հա-
մար պատմական աւանդութիւնն կ'ըսէ, թէ Ս.
Թադէոսի հանգստարանին քով յԱրտագգաւառի
յղացեալ ըլլայ. Շնորհալւոյ համար ալ 'ի թէ այս
անունն արգարե և 'ի հրեշտակէ նախընծայեալ է,
կըրնայ ըսուիլ ըրաշխառն սկիզբ մ'ունեցած. և
մի յայն մաքրակենցաղ և աստուածընտիր ան-

ձանց՝ որք գերազանցօրէն կ'ըսուին յեկեղեցւոջ՝
յորմայէ ըսքէաւ. որոց սրբութիւնն և շնորհքն՝
կենաց հետ սկսած է, և ուրիշ պակսութիւն կամ
արատ մը չեն ցուցած, բայց մահկանացու ըլ-
լալն, եթէ այս աւելի պարծանք մը չէ այնպի-
սեաց, որք մարմին ունենալով անմարմնացէս կ'ա-
պրին: Յիրաւի 'ի մէջ ընտրելոց և սրբոց ալ սա-
կաւածիւ են՝ այսպիսիք. չեմք տարակուսիր որ
մի է յայնցանէ և մերս Ներսէս, որչափ որ վաքքն
վկայութեամբ ժամանակցաց և մերձաւորաց, դա-
րական աւանդութիւն և իր թողած գործքն կը
նշանակեն մեզի. մի յայն անձանց՝ զոր նախա-
խնամութիւնն դարէ դար կը խաւրէ յաշխարհ իր
տանը մէջ մեծ գործ մը կատարելու, բազմաց
փրկութեան պատճառ ըլլալու, և անանց յի-
շատակ և օգուտ թողուլ յապագայն, յազգ և
յեկեղեցի. — մի այն կարմիր և պայծառ հոգի-
ներէն՝ որոց լոյսն և ջերմութիւնն գրեթէ անհրա-
ժեշտ կ'ազգէ մերձակայից, և կը տարածուի 'ի
հեռաւոր ժամանակս. — մի այն կրակոտ միանգա-
մայն և կակուղ սրտերէն՝ որք աստուածային սի-
րոյ յարմարագոյն ընդունարան մ'ըլլալով յար-
մարապէս ալ զայն կը ծաւալեն ուրիշներու. — այն

պիտի հոգիններ՝ որ առանձնական իմն հաղորդիչ և յեղափոխիչ կնիք ունին և որոշուին նաև ի մէջ սրբոց և գովելեաց:

Ս. Ներսէս յաւազանէ ուրիշ անուն մ'ունէր առած, կ'ըսուի, բայց ոչ դե յիշեր է զայն. այնքան Շնորհալի կոչումն ամեն անուան տեղ բաւական սեպուած է. իսկ Ներսէս անունն քահանայ ձեռնադրութեան ատեն գրած է իրեն, կ'ըսեն, իր կաթողիկոս եղբայրն Գրիգորին, ի յիշատակ Մեծին Ներսիսի Պարթևի (որուն հետ ալ զարմանազէպ նմանութիւն ունեցաւ քահանայապետութեան ժամանակին թուականներով¹): Հազիւ կ'աթիւ կարուած՝ Ներսէս իր երիցագոյն եղբոր՝ Գրիգորիսի հետ, Մովսէս գղեական տարուեցաւ իբրեւ բունէ հանած զոյգ ձագուց՝ առ պապին իւրեանց Մեծ Վկայասերն, որ այն ատեն Գող Վասիլ սահմանաց մէջ կը բնակէր. թերևս պատերազմի վախ կար աղայոց ծննդեան տեղը, ինչպէս որ յիշուի քանի մը տարի վերջ ալ այլ աղգիք յարձակեցան հօն, հայրերնին վաճառեց զանոնք, այլ իրենց նախնի Գրիգ. Մագիստրոսի հօր՝ Վասակայ պէս՝ պատերազմէն ետեւ գարաւ նակալ (թշնամույ մը ձեռքով զարնուելով մեռաւ (յամի 1111): Նոյն ատեններն վախճաններ էր Գող Վասիլ մեծ իշխանն ալ, ասպնջականն Վկայասիրին և անոր թոռնեկաց: Բայց սա լաւ ձեռաց յանձներ էր իր սաները. և անոնց մարմնաւոր սնունդէն աւելի՝ մաւաւորն և հոգեւորը հոգալով, կրթել տուաւ գիտնոց և սրբասիրաց. որով մեր հարազատքն՝ սուրբ և ընտանիքը աւելի՝ ճանչցան վանքեր և վանականներ, եկեղեցիներ և քահանայական դասեր. մարմնաւոր ծնողաց գգուանքէն աւելի՝ ընդունելով հոգեւոր դաստիարակաց խնամքը. և կանուխեկ յայտնուեցաւ՝ որ իրենք երկնից՝ քան երկրի համար են: Իրաւամբք կ'ըսէ ուրեմն իր վարդապետ համառօտիչ մը, թէ « Սնուցանէին (զնա) և ուսուցանէին ամենայն բարեպաշտութեամբ ի խանձարրոյ՝ առ սուրբ հայրապետին Գրիգորի Վկայասիրի »: Եւ Լամբրոնացին.

« Ի ստորնգիւյ փոքր հասակէ
Ի միանձանց սրբոց կոչէ.
Դաստիարակ ուսման կարգէ »:

Բայց թէպէտև փափուկ աղայութի վեր միշտ այսպիսի խոշորակեաց անձանց մէջ մեծցաւ և կեցաւ Ներսէս, այլ իր ծննդեան և վիճակին յարմար անձանց հետ ալ անպակաս կ'ապրէր, այս ինքն իշխանազանց և եպիսկոպոսաց. արդէն իր սնած տեղին համար կ'ըսէ Պատմիչ մը թէ, « Տուն (Գող) « Վասիլին էր յայնժամ հաւաքարան թագաւոր « րազանց և ազատաց Հայոց, և աթոռ հայրապետ « տաց »: որով իրեն ազնուականութեան կնիքն ոչ թէ միայն ոչ ջնջեցաւ կամ բրտացաւ, այլ աւելի նրբագոյն ազնուութիւն մ'ունեցաւ. և հայրերնի ազնուականութեան հետ խառնուելով հոգեւոր մ'ալ արգարե շնորհալի կազմեցին զինքը ամենայն կերպով. և ինչուան իր մեզի յիշատակ թողած գրուածներէն ալ՝ կըրնայ նշմարուիլ ազ-

¹ Մեծն Ներսէս նստաւ կաթողիկոս յամի 563, + ի 373: Շնորհալին նստաւ յամի 1166, + 1173. երկուքն ալ նոյն տարեթուի. հետեւաբար երկուքն ալ միայն իբրեւ ութ տարի աթոռակալեցին:

նուական հեղինակ մը: Ներսէս Գրիգորիսէ զատ երկու եղբայր ալ ունէր, Վասիլ անդրանիկն և Շահան կամ Զօրափար՝ կրսերն. զանոնք թողով իրենց ծնողաց և աշխարհի օրինաց՝ Վկայասեր երկու միջիններն ընտրեց նուիրել եկեղեցւոյ և իր աթոռոյն յաջորդութեան. և այս բանիս յարմարեցնել ուղեց զանոնք՝ սրբութեամբ վարուց և գիտութեամբ գրոց: Արդէն իրենց բնակած տեղն այն ատեն կենդրոն կամ սահման էր բազմութե միաբանակեաց սրբասիրաց և իմաստասիրաց: Ասորոց երկրին և կիւրիկիոյ միջոց Տօրոս լեռանց ընդարձակ թիւ մը կը տարածի՝ ծանօթ ի հին գարուց՝ Ամանոս լեռանց անուամբ, որը այս ատեն Սեաւ Լեռնից կոչուէին՝ քարոտ երկրին գոյնին պատճառաւ, ալ յետոյ և հիմայ կեանքով և բնական ամրութեան համար հօս ժողոված էին գարերով առաջ Ասորի և Յոյն կրօնաւորք և ճշնաւորք, զանազան վանքեր շինելով քարանց խորշեր. վերջի ատեններ աւելցան հօն և Հայք. և իւրաքանչիւր իրենց լեզուաւ և ծիսիւ կը զբաղէին աղօթից և ուսմանց. անոր համար և Սուրբ Լեռան կոչեցաւ: Ինքնին Շնորհալին իր առաջին մեզի հասած գրուածոյն մէջ կ'ըսէ տեղւոյս համար.

« Անդ՝ ուր սրբոցն բնակք եղեալ
Եւ ի մարմնի հրեշտակացեալ,
Մշտամոռնչ փառաբանեալ
Զերրորդութիւնն ամենօրնեալ.
Ի վայելուց յայն վայր եկեալ.
Ի Սեաւ մթին լեռան անուանեալ.
Ուր են հոգիք լուսաւորեալ »:

Այնչափ բազմութիւն էին վանքն և վանականք, որ երբեմն ագահութեամբ կայսերք Յունաց ուղեցին կողոպտել զանոնք, կամ խաչուորները աղեղնաւոր դարձնել¹. և երբ Ա Խաչակիրք անոնց սահմաններէն կանցնէին սոված, վանականք շատ պաշար տուին անոնց: Պիտանի հետազօտութիւն մը պիտի ըլլայ այս բազմութիւն վանորէից մնացորդքը և հետքը քննել, որչափ որ տեղին և տեղը բունող թիւրքմէնից կամ նմանեաց դժարութիւնն թողու: Մեր պատմաց քով հազիւ 10 կամ 12 անուն կը գտնուի Ասորոց և Հայոց վանաց. մերայոց մէջ ամենէն անուանին էր Կաթիլ վանքն մօտ ի Քեստուն, իշխանախիստն Գող Վասիլին, և անոր մօտ Արեֆի վանքն (եթէ ոչ նոյն). այս էր գլխաւոր կայսրան Վկայասիրին, և յետոյ Բարսղի կաթողիկոսի. ուր հեռաւոր կողմերէ ալ կու գային բանասէրք լսելու և սովորելու. և ինչուան ոմանք ի վարդապետաց՝ իրենց կարգը և պատիւը ծածկելով՝ կ'աշակերտէին այս վանաց

¹ Այս արեւելեան և զամաքային Աթոս սրբազան լեռան բարդաւաճանաց համար կ'ըսէ մեր ժամանակակից պատմիչաց մէկն. « Տեսանէ (իւսմանոս կայսր) անդ բազմութի « վանորէից և զմենաստանս միայնակեաց, որք ի մարմնի « գոլով զանմարմնոցն բերէին զանանութիւն, որք միով « այծէիւ կամ բաճկոնաւ շատանան... երկաթի բրդի « ձեռն առեալ խոնջեալ աշխատին ի գարի սերմանեաց « պատրաստեալ զօրապահիկն կերակուր... ի գլուխ լե- « րին բարձրացեալ նախամարգարէին կաճառակից գո- « լով միշտ ընդ Աստուծոյ խօսին... թագաւորն ասէ. « Չէ ինձ պիտոյ աղօթք նոցա, այլ գերեզք յամենայն « վանորէիցն աղեղնաւորս ի ծառայութիւն իմում թա- « գաւորութեան »: — Արիստ. Լատով. 2:

վարդապետաց. ինչպէս կ'աւանդեն անուանի Մը. խիթար Գոշ վարդապետի համար:

Այսպէս ըրաւ և մեր պատմութեան կարևոր՝ Ստեփանոս վարդապետ մը, որ շատ սրամիտ և սրբասէր ըլլալով՝ պատանեկութեան մէջ քահա՛նայական աստիճան առեր էր և կը վարդապետէր իր երկրին՝ Մեծ Հայոց՝ մէջ, ուսկից՝ այլազգեաց ասպատակութեան պատճառաւ հեռացեր եկեր էր հօս. և դեռ 18 տարեկան ըլլալով՝ զիւրաւ կըրցաւ աշակերտ ձեռնալ և վարպետ փնտռել: Բայց ոչ երկար առեն. իմաստութիւնն և շնորհքն՝ զինքը յայանեցին. իմացուեցաւ իր աստիճանն, և իր երկրին մէջ քարոզ ալ տալն, առանց դաւա՛զան կրելու: Վանքին բարեսէր ծերունի վարդապետք և հարք յորդորեցին որ իրենց դիմաց ալ քարոզ մը տայ. հնազանդելով՝ կատարեց անոնց խնդիրքը. ամենուն զարմանքը շարժեց գիտութեամբն և վայելաբանութեամբ, զոմանս սիրով և գովութեամբ, զոմանս ալ նախանձով. մինչև սկսան մեղադրել զծերերը, թէ ինչո՞ւ թողուցին որ այդպիսի դեռաշատակ քահանայ մը քարոզէ հանդիսապէս: Ինչուան Բարսեղ կաթողիկոսի ականջը հասաւ ամբաստանութիւնն, այլ անկէ աւելի համբաւն. որ և յօժարութեամբ օր մը գալով այս վանքը, իբրև այցելութիւն ընելու, հետն ալ պատուաւոր եպիսկոպոսներ և իշխաններ առած, երբ շաբաթ օրը երեկոյեան ժամերգութեանն ետեւ քարոզ տալու կարգն եկաւ, ինչպէս որ այն առեն սովորութիւն էր, վանականք խնդրեցին կաթողիկոսէն՝ որ իրեն հետ եկող վարդապետներէն մէկն քարոզ տայ. իսկ նախանձոտներն կ'ըսէին թող քեր տղայ վարդապետն խօսի՝ որ լսենք: Փորձի ժամանակն հասած էր. հրամայ կաթողիկոսն ալ որ Ստեփանոս քարոզէ. և սա խօսեցաւ առանց դժարութեան, և այնպէս վայելուչ և առատաբան, մինչև նախանձոքն անգամ սկսան վախնալ իրենց ցուցած արհամարհանաց համար: Իսկ կաթողիկոսն՝ երբ եկաւ Ստեփանոս երկրպագութեամբ շնորհակալելու՝ ոտք լքելով գրկեց իմաստութեամբ հասունացեալ վարդապետը, իր ոսկէզարդ գաւազանը և մատնին գրաւ անոր ձեռքը. այն օր կատարեալ վարդապետաց դասը անցընելով զնա, իսկ երկրորդ օրը՝ եպիսկոպոսն ձեռնադրելով, և Գող Վասիլ իշխանութեանն տակ եղած տեղերը՝ իրեն թեմ տուաւ բռնոր: Ստեփանոս երբեմն այն տեղուանք պտրտելով երբեմն վանքերը նստելով՝ սկսաւ համարձակ վարդապետել և սովբեցնել. և քանի որ հասակն առաւ՝ աւելի տարածեցաւ համբաւն, և շատերն կը զիմէին իրեն աշակերտելու: Այցերնուս նշանաւոր վարդապետաց կարգն անցաւ՝ Սաբէրանոս Կար. Բր. Լաւրէնցի կամ Գի. Կի. Կի. մականուամբ. թէ և մեզի ծանօթ գրուած մը հասած է՛ այս գիտնական և վայելաբան վարդապետէս, այլ ինչպէս գեղեցիկ կը խորհրդածէ այս աւանդութեանս պատմողն, « Ասաց ոմն յիմաստնոցն, եթէ ծածկեալ գիտու. « Թեան վարդապետի՝ բերան են աշակերտքն »: Եւ ահա շատ աշխատանքին զատ (որոց անուանքն ալ ծածկուած են) կան չորս աշակերտք ծանօթք, չորս արծաթի բերանք, որք մեր Ժ. Բ. մեծանշան դարուն գալուցէն և գիտնոց պարագլուխք են, և ամենէն ընտիր և յստակ հայկաբանութեամբ և վայելաբանութեամբ գրողք. Ի. Կ. Կ. Կ. եպիսկո.

պոս՝ Ղուկասու աւետարանի մեկնիչն, Սարգիս վարդապետ, Կաթողիկէայց թղթոց մեկնիչն, և երկոքին Պահլավունի հարազատքս՝ Գրիգորիս և Ներսէս. որոց նման մաքուր և շնորհազարդ գըրողք կամ չեն եղած կամ շատ քիչ իրենցմէ առաջ և ետեւ. և յետ Ե դարու թարգմանչաց՝ առնոց հաւասար օրինակագիրք են հայերէն գըրութեան:

Ահա այսպիսի մաքուր սրտով և մաքուր բերնով անձի մը և նմանեաց դաստիարակութեամբ՝ ձեռնաւ մեր Շնորհալին, և իբրև արծաթեղէն քուրայի մէջ թափուելով՝ պայծառ ոսկի գուրս ցուցաւ: Այսպիսի ձեռաց մէջ չէր տարակուսեր Բարսեղ՝ մեծ Վկայասիրին աւանդները լաւ տեղաւորած ըլլալու. որ և զԳրիգորիս՝ հազիւ 15 կամ 16 տարեկան՝ քահանայ ձեռնադրեց. և սկսաւ պատրաստել աւելի բարձրագոյն աստիճանի, որոյ՝ իր անկարծելի մասնութիւնն՝ նա ժամանակէն առաջ ալ հասաւ. և հարկ եղաւ աշակերտութեան խոնարհ թափուել թողուլ և վարդապետութեան բարձրագոյն գահը բազմելով՝ իր աստուածաշնորհ հանձարը բանեցնել, օգնութեամբ իր վարպետ Ստեփանոս եպիսկոպոսի և նմանեացն: Բայց եղբայրն՝ Ներսէս՝ աւելի երկայն առեն աշակերտեցաւ, նոյն իսկ խնամք և հոգով իր եղբորը, որ թէ և իրմէ 6 կամ 7 տարով միայն մեծ էր, այլ հիմայ հոգևոր աստիճանաւն ոչ միայն հայրացաւ այլ և հայրապետացաւ: Յայտնի էր որ երկու եղբայրն ալ Հայոց սրբազան կաթողիկոսն համար կը պատարաստուէին, բայց չէր կարծուէր այսքան շուտով. Բարսեղ դեռ չէր հասած Վկայասիրին ծերութեան. և անոր պէս միտք ունէր Երուսաղէմ երթալու, յետ Վարդապետի տօները կատարելու. և ճամբան յանկարծօրէն, և ցաւալի կերպով մը, փոխեցաւ յանդարձ ճամբայ: Վամ տօնական հանգէսը կատարելէն վերջը՝ տանեաց մը վրայ հանգչելու ատեն իր փղբրաւորքը, տանիքն վար փլաւ. և կամ չէնք մը շինել տալով և գիտելով զայն՝ սիւն մը պըրծաւ կանգնողներուն ձեռքէն, և վրան ընկաւ. կամ մէկ կամ մէկայլ կերպով զինքը վառեց ի մահ. երեք օր միայն ապրեցաւ. բայց այն օրերուն՝ միակ կարևոր գործ համարեցաւ շուտով իրեն բերել տալ զԳրիգորիս, և մօտ գտուած եպիսկոպոսաց և իշխանաց առջև՝ ձեռնադրելով եպիսկոպոս, կամ (ըստ ոմանց) միայն տալով առնոր կաթողիկոսական քօղն ու դաւազանը, ինչպէս որ ութ տարի առաջ կտակեր էր Մեծ Վկայասիրին, և ամենուն հաւանութիւնն առնելով՝ վախճանեցաւ:

Յամին 1113 ամառուան մէջ, Գրիգորիս՝ այսուհետեւ Գրիգոր Գ, նստաւ յաթոռ Մեծի Վկայասիրին, ինքն ալ Վկայասէր Փղբ, և յաթոռ նախահաւուն իւրեանց Ս. Լուսաւորչին. ասոր թողուն և իր անուանակից Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանիսի նման՝ պատանեկութեան մէջ այնպիսի գերազանց բարձրութեան հասած, դեռ 34 շաբաթ 18 տարեկան ըլլալով. որ որչափ ալ մերձաւորաց խորթ բան մը չէր երևէր, ընտրելոյն սրբութիւնը և իմաստութիւնը տեսնելով, հեռաւորաց կըրնար գայթակղութիւն կամ արհամարհանք ըլլալ. սակայն բաց ի Աղթամարայ կողմէն, ուր առաջուց ալ ինքնապլսութիւն մտեր էր, ուրիշ շատե.

րու շփոթութիւն չերաւ այս բանս. մէկ մը արգէն ծանօթ ըլլալով Վկայասիրին դիտաւորութե, մէկ մ'ալ՝ ոչ անսովոր Հայոց մէջ ազգաւ ժառանգութեան նաև սրբազան կարգաց, և Լուսաւորչի ցեղին օրինակն ոչ միայն յայտնի՝ այլ և պաշտելի էր, ինչպէս որ քիչ մ'առաջ տեսանք: Սակայն մեզի ժամանակաւ հեռաւորաց, և ընդհանուր անաչառ դատողաց՝ դարձեալ անբնական և անընդունակ դործ մը կ'երևի, որչափ ալ անձինքն սիրելի են. և նոյն ինքն անոնց մերձաւորն արեամբ և արդեամբ և ժամանակաւ՝ Ն. Լամբրոնացին, կերպով մը մեղադրելով ազգաւ քահանայական պայադատութիւնը, կը յիշէ որ իր օրերն ալ կը խօսէին այս Գրիգորիսի դեռահասակ կաթողիկոսութեան, և Ներսիսի եղբայրական ընտրութեանն համար. թէ և ինքն ալ չիկրնար լռել անոնց անհամեմատ արժանաւորութիւնը: Այս բանիս համար էր որ հարկ համարեցանք քահանայական պայադատութեան վրայ խօսիլ, ցուցնելով պատճառը և սովորութիւնը, և ոչ թէ գովելով զրուծիւն մը կամ պարսաւելով հարկը:

Ն.

Գրիգորիս կարողիկոս. — Աղբամարայ առաջնայն տպատարութիւնն. — Ժողով Սևաշիրին. — Երկրաշարժ. — Վասնանայութիւն Շնորհաշոյ և ձգնորիւնը. — Ուսմունք և գիտութիւնը Ներսիսի. — Շնորհքն կամ օծումն. — Շարժագրութիւն. — Զարմանալի կերպ Շարադրութիւն. — Յատկապատկերութիւն:

Շնորհաշին 11 տարուան էր երբ եղբայրն Հայոց եկեղեցւոյն գլուխ բազմեցաւ: Մինչ ամեն կողմ 'ի Հայս նորընծայ կաթողիկոսին կոնգակներն կ'երթային և հպատակութեան թուղթեր կու գային, և դեռահասակ քահանայապետն հայրենական և հոգևորական ազնուականութեամբ կը պատկառեցնէր զտեսողս, — վասն զի և բնական վսեմ ձիւրք և տեսիլք մ'ունէր, — լուսեցաւ Աղթամարայ աթոռոյն տպատմութիւնն: Սովորաբար կարծուի թէ այս ատենէն սկսած է այս տեղոյս առանձին կաթողիկոսութիւնն, որ շարունակելով հասաւ մինչև մեր օրերը. սակայն այն աթոռոյն հին դիւանքն կը ցուցնեն (եթէ խարդախութեամբ հնարուած չըսուին) որ ժ. դարու սկզբէն սկսած է Աղթամարայ՝ թէ ոչ ինքնազիւնութիւն գոնէ առանձնաշնորհութիւնն. երբ Արծրունեաց և Վասպուրականի նախարարն խորագէտն և փառասէր Գագիկ՝ թագաւոր եղաւ երկրին, ուղեց որ ինչպէս ինքնագլուխ քաղաքական տէր, այսպէս ալ եկեղեցական գլուխ մ'ունենայ իր երկրին. և հաւանութեամբ Բագրատունի թագաւորին Հայոց՝ Գէորգ կաթողիկոս զեղբորորդին Գագիկայ Նզիսէ՝ ձեռնադրեց (յամի 921) եպիսկոպոսապետ բոլոր Վանայ ծովուն չորս բոլոր սահմանաց, հարաւային կողմէն ալ ինչուան 'ի Ճուլամերկ և 'ի Մուսուլ ընդարձակելով անոր թեմերը: Նզիսէն ինչուան 'ի Գաւիթ՝ որ մեր Գրիգորիսէն տպատմեցաւ՝ երկու գա-

րու միջոց 20 եպիսկոպոսապետք կը համարին յանուանէ: Շատ հաւանական է Գագիկայ ուղածն. այլ եղածն՝ թուի թէ ոչ բոլորովին ինքնագլուխ և ազատ կաթողիկոս էր. վասն զի անկարելի է որ Հայք և իրենց բնիկ կաթողիկոսն հաւանէին այս բանիս, այլ այնպիսի մեծ պատուով և ընդարձակ թէմով եպիսկոպոս մը զըրուսեցաւ Գագիկայ թագաւորութեան մէջ յԱղթամար, ինչպէս երբեմն էր Սիւնեաց եպիսկոպոսն կամ Մարգալտականն: Հարկաւ այնպիսի ընդարձակ երկիր քանի մ'եպիսկոպոս ալ ունէր, որոց գլուխն էր Աղթամարայն՝ իբրև արքեպիսկոպոս կամ մետրապօլիտ. այլ թէ ինքնին եպիսկոպոս ձեռնադրելու իշխանութիւն ունէր՝ տարակուսելի է, մանաւանդ թէ չէ հաւանական: Արծրունեաց թագաւորութիւնն դար մը քչեց, երբ վերջին թագաւորն Սենեբերիմ՝ ընտանեօք և ձիււրօք փոխադրեցաւ 'ի Սեբաստիա, հարկաւ նըւաղեցաւ իր թողած երկրին եկեղեցական աթոռն ալ, թէ և դեռ երբեմն իր արքունի ցեղէն եպիսկոպոսք ալ նստան Աղթամարայ աթոռը, որ ջանաց միշտ իր մեծապատուութիւնը պահէ. և անշուշտ ասոր համար էր որ Փիլարեա բռնաւորն այս կողմէս կաթողիկոս հրաւիրեց փոխանակ Վկայասիրին, և գոնէ քիչ ժամանակ մը բերաւ ու նստուց իր սահմանները: Յայտնապէս այս մեծ հայրապետին (Վկայասիրի) ատեն կ'երևի Աղթամարայ կամ Վարադայ եպիսկոպոսին գլուխ շարժեն, որ առանց նախընթաց պատճառի կամ համարեալ իրաւանց՝ չէր կրնար ըլլալ: Այսպիսի իրաւանց մէկն ալ կը սեպէին՝ Վահան կաթողիկոսի Անիէն փախելով գալ և նստիլ այս կողմերս. և հօն մնացած ըլլալն շատ մը թանկ նըխարաց Ս. Լուսաւորչի, և այնպիսի բաներ, (ինչպէս քօղ, գաւազան, և այլն) և Հռիփսիմայ նըխարք, որ միշտ կաթողիկոսի քով կը պահուէին: — Արգ այսպիսի նախընթաց պատճառաց վրայ աւելցնելով հիմուս Ս. Խաչի եպիսկոպոսն Գաւիթ, նորընծայ կաթողիկոսին անկատար հասակը, յայտնապէս գլուխ քաշեց, և քանի մ'օրիչ եպիսկոպոս ալ հաւանեցնելով զինքն օծել տուաւ կաթողիկոս, ոչ թէ միայն իր տեղական աթոռոյն, այլ գուցէ և բոլոր Հայոց. թէպէտ Գագիկայ իշխանութեան սահմաններէն անգին չանցաւ իր բռնաբարեալ իրաւունքն, մանաւանդ աւելի ամփոփ էր, և ևս աւելի ամփոփեցաւ յետոյ: Սակայն պատճառած շփոթութիւնն հարկադրեց՝ որ մեր Պահլաւունի կաթողիկոսին քով ազգային եկեղեցական ժողով մ'ըլլայ, և եղաւ յաջորդ տարին, 1114:

Շատ փափաղելի էր այս ժողովոյս գէպքն և կանոնները գիտնալ, վասն զի շատ կարևոր բաներ սահմանուած կարծուին հօն. այլ ժամանակակից պատմիչ կամ պատմութիւն մը չէ հասած մեր ձեռքը. այսչափ միայն կ'աւանդեն, և նոյն ինքն Շնորհաշին մեր, որ այն ատեն տղայ դիտող մ'էր, և յետ 50 տարւոյ իր մէկ գրութեմին մէջ կը յիշեցնէ, որ 2500 անձէ աւելի էին ժողովականք (հաւանօրէն 'ի սահմանս Կարմիր վանաց), եպիսկոպոսունք, իշխանք, վարդապետք, վանահարք և արժանաւոր վանականք Ս. Լերինն. որք միաբան հաւանութեամբ՝ ապստամբ և անկանոն համարեցան զԴաւիթ և իր հետեւողքը: Նւ օրի-

նաւոր կաթողիկոսի հաստատութեան համար (ըստ ոմանց այս ժողովքին մէջ) սահմանեցին, որ հարկաւորապէս ընտրութեանը ներկայ գտուին կամ գրով հաւանութիւն տան ուրիշներէ զատ՝ այս չորս մեծածախ եպիսկոպոսներ. Թ, Բլնոյ, անշուշտ մեր Պաշտօնական հայրենի աթոռն ըլլալուն համար, ուր փոխադրած պէտք է սեպեւ Այրարատայ եպիսկոպոսի աթոռն. Բ, Հաղբատայ, զոր գեռ քիչ տարի առաջ Բարսեղ կաթողիկոս հաստատեալ էր բարձր պատուով, 'ի շնորհս Հայ-Աղուան Թագաւորաց անշուշտ. Դ, Արտաշու կամ Թագրէ վանքի եպիսկոպոսն, որ ճին Մարգարտականի յաջորդն կրնայ պարծուիլ, և սա էր երբեմն նախագահ եպիսկոպոսաց Հայոց. Դ, Սիւնեացն, որուն անցեր էր նախագահութիւնն՝ վերցուելով 'ի Մարգարտականէն: Ոմանք ասոնց մէկուն տեղ՝ Ռշտունեաց եպիսկոպոսը կը մըտցունեն, որ ըսել կ'ըլլայ նոյն իսկ Աղթամարայ աթոռական: Շատերն կը յիշեն այս սահմանագրութիւնս. բայց ինչպէս անտարակոյս չէ այս ժողովին մէջ կանոնութիւն, նոյնպէս ալ տարակուսելի է թէ յաջորդ կաթողիկոս ընտրութեանց մէջ պահուած է միշտ կանոնն թէ ոչ: Բայց Աղթամարայ կաթողիկոսութիւնն ինքնագլուխ մնաց անկէ ետեւ մինչև մեր օրերը, և յետ 'Իսթի հետ զհետէ 92 կաթողիկոսք նստած են մինչև 'ի տարաբաղուն Պետրոս Պիւլպիւլ, որ յամի 1864:

Սեաւ Լերին ժողովոյն տարին, նոյեմբեր ամսոյ 29ին, բնական և ահագ զիպուած մ'ալ հանդիպեցաւ հօն և մերձաւոր սահմաններ. սաստիկ երկրաշարժ մը, որ բաց 'ի նիւթական շինուածոց՝ 40,000 մարդկան մահ պատճառեց. քանի մը վտնքեր և եկեղեցիներ ալ կործանեցան, որոց մէկուն մէջ 30 միաբանք և երկու վարդապետք ժամաստցութեան ատեն՝ փլած շէնքին տակ մնացին: Այս սոսկալի պատահարին ականատես և ազատողներէն մէկն ալ մեր մանկահասակ Շնորհալին կրնայ ըսուիլ, որոյ նրբազգած մտաց վրայ հարկաւ անանկ տպաւորութիւն մ'ըրած է, որոյ անգրագարձութիւն կրնանք սեպել իբրեւ 40 տարի ետեւ ստորագրած աշխարհքին աւերածը, Յիսուս Որդի քերդուածին վերջերը.

« Յորժամ տարեբլբս զղղրդին », եւ այլն:

Նորնծայ կաթողիկոսն՝ որ հայրաբար և եղբայրաբար կը խնամէր իր հարազատը, չուշացաւ իրեն պէս զայն ալ սրբազան աստիճանաց բարձրացնելու. և հօս ալ տարիքն անդի տուաւ գիտութեան և սրբութեան. Շնորհալին գէթ իբրեւ 17-18 տարեկան քահանայ ձեռնադրուած պիտի ըլլայ. թէ և չի յիշուիր որոշ տարին. սակայն նոյն ինքն Ներսէս իր առաջին գրաւոր երկասիրութե մէջ, որ է Վիպասանութիւնն, գրած յամի 1121, իր կենաց 204 տարին, կը ծանուցանէ որ արդէն քահանայ էր. մանաւանդ թէ վկայէ դեռաբոյս հասակի մէջ քահանայանալն ալ խնամք և ձեռք եղբորը.

« Մինչեւ յարբուներս հասուցեալ,
Եւ քահանայ ձեռամբ օծեալ.
Երկուսորն Հօր նըւիրեալ
Եւ Միածնին իւր ընծայեալ:

Եւ յետ քանի մը տող ալ խոնարհութեամբ զննքն անարժան գրելու այսպիսի սուրբ աստիճանի, կը յաւելու յուսով ջանալը՝ համեմատ գտուելու այն վիճակին.

Միայն ի յոյսն յուսացեալ,
Ի Բարձրելոյն ալ զօրացեալ.
Զի յայցանեաց ի բաց տարեալ՝
Զիս ի բարիսն փոփոխեալ »:

Ո՛րչափ սիրալի էր տեսնել 20-22 տարուան կաթողիկոս մը արեգարդ եպիսկոպոսաց և վարդապետաց գլուխ կեցած՝ Աստուծոյ սուրբ սեղանոյն պատարագ և պատարագիչ ընծայելի չրեշտականման պատանեակ հարազատը, որ իր հոգւոյն կնիքը կ'ընդունէր յԱստուծոյ և յեղբորմէն. շատ աւելի սիրալի և սրբալի էր տեսնել նորնծայ ամբիկոտ շնորհազարդ քահանայն՝ դեռ հասակին աճման չափը չըլցած, հրեշտակներէ բարձր խորհրդոց մէջ մտնել և կատարել, և կատարել արժանաւորապէս, որչափ որ հոգեղէն մարմին կրնայ արժանաւորել, իր հողութիւնը թէ ոչ իսպառ թօթափելով, գոնէ անոր երկրաբարձութեան ազատելով, կամ կռուելով՝ ազատելու և թեթեւալու: Եւ յիրաւի քահանայութիւնն ընդունելով՝ Ներսէս՝ հարկ սեպեց 'ի յոյսն յուսացեալ և Բարձրելոյն աջով զօրացեալ՝ առաւել քան զառաւել « 'ի բարիսն փոփոխեալ ». իր զգուշաւոր և առաքինի վարպետներէն և դաստիարակներէն աւելի ինքն իր վրայ զգուշանալով, խստանալով. ինք զնքն յորդորելով և կրթելով, ճգնութեամբ և տքնութեամբ. ինչպէս իր համանուն և համանման շատ մասամբ՝ Ներսէս Լամբրոնայի՝ կը գրէր անոր վրայօք. թէ երբ քահանայութեան

« Յայս պատիւս նախ ելանէ,
Ճգնողական կիրքս կրէ.
Պայծառ զմարմին իւր չարչարէ.
Ի յանդադար պահս ճնշէ.
Նոյն աղօթիցն պարապէ.
Զանձն 'ի Փրկչին խաչ հեղուսէ.
Պատարագել ոչ դադարէ,
ԶՅիսուս ընծայ Հօր նըւիրէ »:

Ճշմարիտ վկայութիւն 'ի փորձ անձնէ. որոյ նման և արձակաբան պատմիչ վարուց Սրբոյն՝ զմայլմամբ կ'ըսէ. թէ ինչպէս « Անմարմնաբար և աստուածայնապէս սպասաւորեալ մեղսաբաւիչ և « կենարար սուրբ խորհրդոյն, օրինակ բարեաց « տայր զանձն բազմաց, և նախանձելի լինէր ող- « ջախոհ մոլոդացն 'ի բարիս: Քանզի վառեալ էր « ամենեւիմբ 'ի հօւր սիրոյն Աստուծոյ. և ոչ ինչ « էր 'ի մարմնական գիջութեանց և 'ի մոլեկան « զբաղանաց՝ որ կարէր շիջուցանել զայնպիսի « բորբոքումն »:

Անշուշտ, ինչպէս որ տարւոր եպիսկոպոսուք և առաջնորդք Քրիստոսի վեմական ծանրութեան և զգաստութեանէն պատկառելով իրենց լիակատար կաթողիկոս մը կը ճանչնային զնա, այսպէս և երիցագոյն քահանայք և միանձուք՝ իրենց պատկառելի օրինակ մը՝ զՆերսէս: Իսկ ինքն նաև աւելի տարւոք յառաջելով ալ՝ դեռ աշակերտ և համբակ և տգէտ կը ճանչնար զնքը, ինչպէս իր Վիպասանութեան սկիզբը կ'ըսէ.

« Զի հրահանգից վարժարանի
Զեմ տակաւին ներկուռ բանի » .

և վերջն ալ կը կնքէ .

« Կատարեցաւ բանքս չափեալ
Ի համբակէ նըւաստացեալ » :

Թուի թէ ոչ միայն վարուցը վրայ կը դրանշանա-
յին տեսողք, այլ և այնպիսի վարք ստանալու
կերպը կ'ուզէին սովորիլ: Այլ չէ հաւաստի ինչ
որ մեր պատմահայրն Չամչեան կարծէ (Գ, 86) թէ
քահանայութեանն ատեն գրած ըլլայ Ենորհա-
լին ճգնողական վարուցը վրայոք գիրք մը ¹:

Այսօրից և ուսմանց ապաստանաց մէջ սնեալ և
գրեթէ ծնեալ, բնութիւն եղաւ իրեն ասոնցմով
իր հոգին և միտքը կրթել, և այսպիսեաց ակոր-
ժիլ: Կը փափաքէր մտաց թեւերն ալ արձկնել,
անոր յարմար տեղեաց և իրաց վրայ գեղեցիկ և
մեղուաբար քաղել իմաստութեան մեղր ու ծաղիկ:
Կը համարձակի յայտնելու այսպիսի բերումը և
նաև զըզումը:

« ՅԱթենականն քաղաքի
Զանձն իմաստիւք ոչ կրթեցի » .

և կը յիշէ հին Յունաց գերագոյն հանձարները,
և անոնց հետեւելու նախանձը:

« Ուր ըստանն Պղատոնի,
Եւ չափ սուրբ Հոմերոսի.
Ուր ստորագոյն Արիստոտել,
Տասնն բանիւ զըրօն էի.
Ուր հոյք ամեն հըռետորի,
Ժողովարան ճարտասանի,
Ներհմտութիւն քերականի ² » :

Սեաւ Լերանց վանորէից մէջ արգարեւ կային
իրեն վարդապետը հմուտը և վայելագոյնը, ինչ
պէս գիտնականն Ստեփաննոս, և մեծ Վկայասի-
րին ատեն և վերջը յիշեալք Մեղրիկն, և Մատ-
թէոս, և Կիրակոս Տօնամակաց աւարտողն, և
այլք: սակայն հարկ է խոստովանիլ որ ոչ միայն այն
ըզձացեալ նրբամիտ հեղինական Պղատոնը և Արիս-
տոտէլք չկային, այլ և անոնց հասնելու ճամբան
ալ շատ բանուկ չէր, այսինքն յունական գաղութի
չկար. և նոյն իսկ յիշեալ գիտուն և գրագէտ վար-
դապետք ԺԲ արծաթի դարուս, կամ քիչ կամ ոչ
գիտէին յունարէն լեզու, յորում գեռ շատ տե-
սակ գիտութեանց գրքեր գտուէին. այլ անոնց
Ս. Հարց գործերն մեծաւ մասամբ հայերէն թարգ-
մանուած ըլլալով 700 տարուան միջոց, և այն
վանորէից մէջ ալ ժողոված՝ թէ միանձանց և թէ
մեր երկու Վկայասէր կաթողիկոսաց ջանքով,
տեղւոյն բանասէրք և գրասէրք ալ այնպիսի թարգ-
մանութեամբք և անոնց հետեւեալք մեր բնիկ Հայ
վարդապետաց շարագրած գրքերով իրենց ու-
սում և պարապմունք կ'ընէին. և եթէ շատ տե-

¹ Լամբրոնացոյ ըսածը « ճգնողական կերպ կրէ », ուրիշ օրինակի մէջ կարդալով քերէ: Գրէ:

² Նաև 47 տարի ետեւ առ Մանուէլ կայսր գրելով ցա-
ւօք կը յիշէ լաւ վարժարաններ և ձեռնտուներ չունե-
նալն այն ատեն ի Հայս. « Ուր մեր վարժարանք ի թա-
« գաւորական պատրաստեալ հրամանացն. և կամ յոյս
« փառաց և պարզեաց՝ յառաջացելոցն յիմաստս, որ մա-
« նաւանդ մանկաբարոյից՝ են առաւելագունի պատճառ
« փութոյ կրթութեան »:

սակ գրոց և ուսմանց չէին կըրնար զբաղիլ՝ այն
քիչ տեսակները ստեղծ կարգաւով և քննելով
լաւ կը թափանցէին անոնց մտաց, կը սեփեա-
նէին անոնց խօսքերը և ընտիր շարագրութիւնը
որով և իրենք ալ չափաւոր հմտութեամբ և յըս.
տակ լեզուով հաւասար նախնեաց կամ քիչ պա-
կաս՝ կը գրէին: Ասով մեզի գրեթէ 800 տարի
հարազատ հայկաբանութեան պայծառ վտակ մը
հոսեր և հասուցեր են. իսկ գիտութեան ատի-
ճանն հասարակօրէն չէ բարձրացեր. այլ առանձ.
նական անձինք յոյն և արաբացի կամ պարսիկ
գաղութեան ետեւ ըլլալով կըրցեր են աւելի
զարգանալ մաթ և բանիւ, նոր գիտութեանց
համետեւել և ուրիշներու ալ համետեւ ընել: Ինչ
պէս յետ մեր ոսկեղինիկ թարգմանչաց Ե գարու,
Պետրոս Քերգոյ Սիւնեաց (Չ գար), Անանիա Նի-
րակացի (Ե), Յովհաննէս Իմաստասէր (Ը), Ստե-
փաննոս Սիւնեցի (Ը), Յովհաննէս Բժիշկ (Թ),
Գրիգոր Մագիստրոս (ԺԱ), Սարկաւազ Վ.ճ.
(ԺԱ-ԺԲ), Միխիթար Հերացի (ԺԲ), և այլն: Այս
պիսիք սակաւաթիւ են մեր գաղութեան մէջ
գուցէ և շատ համարձակելի չէր անոնց՝ վարգա-
պետել արտաքին գիտութիւններ վանորէից մէջ.
ուստի և այս սուրբ Լերանց բաղնիքի վանից և
վանականաց մէջ ալ հազուադէպ պէտք է հա-
մարիլ յունագէտները, մանաւանդ լաւ գիտող-
ները. որով և մեր կրսեր Վկայասէրն և Ենորհա-
լին՝ իրենց նախնեաց՝ Գր. Մագիստրոսի և անոր
որդոյ մեծ Վկայասիրին՝ առաւելութիւնը չու-
նեցան յայտ մասին. գուցէ քիչ մը գիտէին յու-
նարէն, այլ ոչ կատարեալ հասկանալու և թարգ-
մանելու չափ. ապա թէ իրենք ալ Բ թարգմա-
նիք կ'ըսուին, երկրորդ ձեռքով են թարգմա-
նիք, այսինքն ուրիշ լաւ յունարէն գիտողաց
ձեռք թարգմանել կու տային, և իրենք զժայն-
րէն շարագրութիւնը կը կոկէին և վայելացընէին.
ինչպէս վկայէ ինքնին Ենորհալին Ս. Սարգսի վկա.
յարանութեան և ուրիշ քանի մը թարգմանու-
թեանց յիշատակարանաց մէջ. այսպէս կ'ընէր
երբեմն կամ ընել կու տար Մեծ Վկայասէրն ալ:

Կը շարունակուի:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՅ ՅԻՏԱԿԻԱ

ՎԵՑԵՐՈՐԳ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՈ

(Տես երես 200:)

Ուրիշ երեւիլ և իսկագոյն հեղինակ
մ'ալ է Պիլի, որ մեր մէջ մտուց Անգ-
ղիացոց յեղաբարոյ (humour) ըսուած
ոճը, տեսակ մը՝ յորում ոճն շուտ մը լա-
լէն ի ծիծաղ կ'անցնի, աղօթքէն յեր-